ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԶԱՌ ՀԱՄԱՅՆՔ

16.08.2010թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված

աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

ԶԱՌ 2010թ.

Հարգելի Զառեցիներ, 2009թ. վերջին հինգ ամիսների և 2010թ. առաջին եռամսյակի ընթացքում համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2009թ. հունվարի 22-ին ավագանին իր թիվ 1 որոշմամբ ընդունել է 2009թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են19 մլն 60 հազ. 300 դրամ, ծախսերը՝19 մլն 241հազ. 100 դրամ: Պակասորդը կազմել է 180 հազ 800 դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Զառի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 5 մլն 740 հազ. դրամ:2009թ. հողի հարկը հավաքագրվել է 6 մլն 150 հազ 930 դրամ որը կազմում է պլանի 107.2 % : 44 տնտեսություններ օգտվել են հողի հարկի արտոնություններից, որոնց նախկինում կուտակված պարտքերի տուգանքները զրոյացվել են:

2009թ. գույքային հարկերը հավաքագրվել են 91.55%-ով , որը բացարձակ թվով կազմել է 1 մլն 629 հազ. 500 դրամ:

2009թ. դեկտեմբերի 4-ին համայնքի ավագանին իր N 39-Ն որոշմամբ ընդունել է 2010թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 21 մլն 508 հազ. 700 դրամ, ծախսերը՝ 21 մլն 943 հազ. 600 դրամ:

Հողի հարկը կազմել է 5 մլն 700 հազ դրամ, որից առաջին եռամսյակում հավաքագրվել է 1 մլն 886 հազ. դրամ, որը կազմում է տարեկան պլանի 33.1%-ը

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 650 հազ.դրամի օգնություն /2009թ-2010թ. առաջին եռամսյակի ընթացքում/: Այդ թվում եղել են ուժեղ քամուց տուժածներ, հիվանդներ, անապահով ընտանիքներ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Զառի միջնակարգ դպրոցի 2009-2010թ.թ. ուս. տարվա շրջանավարտներին տրվել են 50 հազ. դրամի նվերներ: 2009թ. սեպտեմբերի 1-ի կապակցությամբ առաջին դասարանցիներին տրվել են նվերներ 50 հազ. դրամի չափով:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից Զառ համայնքը ստացել է ջրօգտագործման թույլտվություն, որի համար յուրաքանչյուր եռամսյակ մուծվում է 41.6 հազ. դրամ վճար: Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 988 հազ. դրամ :
Համայնքի ավտոկանգառների ընթացիկ նորոգման և պահպանման համար ծախսվել է 440 հազ դրամ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 4 թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2010թ. հունվարի 15-ին կայացել է Զառ համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում օտարվել են բնակարանային կառուցապատման 0.8 հա երկրորդ կարգի հողամասեր:

Աճուրդի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 4 մլն 30 հազ. 770 դրամ գումար: